

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2016 թ-ի նոյեմբերի 30-ին կայացած
գիտական խորհրդի նիստի

Օրակարգում՝

1. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորում / ամբիոնի վարիչներ/;
2. Առկա ուսուցմամբ 2015-2016 ուստարվա 2-րդ կիսամյակի սոցիալական արդյունքների ամփոփում;
3. Հեռակա ուսուցմամբ մագիստրոսական թեզերի պաշտպանության նախապատրաստական աշխատանքների մասին / ծրագրի ղեկավարներ/;
4. Բակալավրիատի և մագիստրատուրայի ընթացիկ քննությունների և ստուգումների կազմակերպչական աշխատանքները ֆակուլտետում;
5. Տպագրության երաշխավորման հարցը;
6. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին՝ Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչներ Ս.Զաքարյանը, Գ.Շահվերդյանը, Հ.Ավանեսյանը, Ա.Մանասյանը, Ն.Խաչատրյանը ներկայացրեցին իրենց ամբիոնների ասպիրանտների և հայցորդների հետ անցկացրած ատեստավորման աշխատանքների արդյունքները:

Որոշեցին՝ Հաստատել ամբիոնների կողմից ատեստավորած ասպիրանտների և հայցորդների մեկ տարվա աշխատանքը:

2. Լսեցին՝ Առկա ուսուցմամբ 2015-2016 ուստարվա 2-րդ կիսամյակի սոցիալական արդյունքների մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Դեկան Ա.Բաղդասարյանը ներկայացրեց սոցիալական արդյունքները, որոնք բավականին բարձր են: Ուսանողները դրական են գնահատել նաև դեկանի և դեկանատի աշխատանքները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

3. Լսեցին՝ Հեռակա ուսուցմամբ մագիստրոսական թեզերի պաշտպանության նախապատրաստական աշխատանքների մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Բոլոր ամբիոնների ծրագրերի ղեկավարներ՝ Վ.Միքայելյանը, Է.Զաքարյանը, Ս.Զաքարյանը և այլոք, ներկայացրեցին իրենց կատարած աշխատանքները, անցկացվել են նախապաշտպանություններ, բոլոր ուսանողները պատրաստ են պաշտպանություններին:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

4. Լսեցին՝ Բակալավրիատի և մագիստրատուրայի ընթացիկ քննությունների և ստուգումների կազմակերպչական աշխատանքների մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Դեկան Ա.Բաղդասարյանը հանձնարարեց ամբիոնի վարիչներին վերանայել, թարմացնել հարցաշարերը: Պրոֆ. Հ.Ավանեսյանն առաջարկեց հարցաշարերում ընդգրկել խնդրահարույց հարցեր՝ արտագրություններից խուսափելու համար:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

5. Լսեցին՝ Տպագրության երաշխավորման մասին հարցը:

Արտահայտվեցին՝ պրոֆ.Հ.Ավանեսյանը, դոց.Վ.Պապոյանը ներկայացրեցին ընդհանուր հոգեբանության ամբիոնի լաբորատորիայում հայ-ռուսական ծրագրով կատարված աշխատանքների հոդվածների ժողովածուն: Այն անցել է մեթոդ խորհրդով, կա մեթոդ խորհրդի դրական եզրակացությունը:

Որոշեցին՝ Ժողովածուն երաշխավորել տպագրության:

6. Ընթացիկ հարցեր;

- Դեկան Ա.Բաղդասարյանը գիտխորհրդին ներկայացրեց ֆակուլտետի լավագույն ուսանող ճանաչված հոգեբանության 4-րդ կուրսի ուսանողուհի Անահիտ Գևորգյանին:

Նիստի նախագահ՝ Ա/Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Ս.Սարգսյան